

ԻՐԱՎՈՒՆ

ՄԱՐՏԻ 29 1900 Վ. Գ. Ա. ՅԻՆ ԵՒ ՔԱՆԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ

Rev. Père G. Kalemkarian M. chitarist: ngasse
N° 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիսիոյ համար Տարեկան 12 փր.
» » Վեցամսեայ 6 փր.
Արտատպանի համար (երկու քիւր մեկ
հոգով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր.
Ամերիկայի » 2.60 տոյ վեցամս 1.50
ԿԱՆԿԱՆՈՒ ՎՃԱՐՆԵԼԻ

Համայն ցրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով

ԽՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍՈՒՍ (Պուլկարիա)

Редакция на ВѢСТНИКЪ

Rédaction du journal

„И р а в у н к ъ“

„I r a v o u n k“

ВАРНА (България)

V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ողորդող գրութիւնը
էս չեն դրկուիր եւ յարմար դատարան-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովի՝ կամ մասապէս:
Պատկերակները տողը 20 սանթիմ. երե-
քն անկի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ՊԱՏԻՈՅ ԱՏԵԱՆ

— . 0 . —

Այս քան առանձնակ տարիներէ ի
վեր իրենց թուով ազգասիրական գոր-
ծերով հանրաժանօթ եւ Եւրոպական
քաղաքացոյն շրջանակներու մէջ ջերմ
համակրանք ու յարգանք փայտող զոյգ
մարդիկ, Տիար Բոսֆէսուս Կարապետ
Յակոբեան եւ Տիար Յ. Իսկէնաւէր
Դոքտորի եւ Մարտի խմբագրութեանց
հետեւեալ նամակը ուղղած են, որուն
պարունակութիւնը մեր տեսութիւննե-
րը կը հաստատէ:

... Պատուաւոր խմբագրութեան:

10 մարտ 1900

Խորին ցաւով կը դիտենք որ,
վերջի տարիներս մասնաւորապէս,
Հայ ազգին հանրային կեանքի
շրջանակին մէջ, շատեր իրենց սո-
վորութիւնը քսած են անուանա-
կել, վատահամբաւել, զրպարտել
ու ու ան ազգայինը, առանց ան-
հրաքելի ճշմարիտ ապացոյց ունե-
նալու անոր մեղապատմութիւնը
մոռնի՝ եւ, առանց քննութեան,
զիրութեամբ հաւատք բնծալիլ
անուանարկիչ լուրերու որոնք կր-
նան շարունակութեամբ կամ թիկնու-
թեամբ հրապարակ նետուած ը-
լալ:

Այս բարեբը, որոնք ուղիղի
տկարութեան եւ սրտի անազնու-
թեան նշաններ են, չէին կրնար
չմոլի մեր ժողովրդին մէջ մեծա-
մեծ աղէտներ: Այդ բարեբերուն
չնորհիւ է որ շատերու վրայ կը
տեսնուի ուրիշներու մասին ակնա-
ծա՛քի, վատահամբաւ, սիրոյ ըզ-
գացումներուն տկարացումը եւ եր-
բեմն իսկ չբացումը, եւ սակայն
այդ զգացումներով ազգին ճշմա-
րիտ մեծ ոյժը պէտք է որ կազ-
մուէր:

Մեր վերականգման գործին հա-
մար, գրական եւ կամ ուրիշ կար-
գի նիւթական մեծ զօրութիւններ
լուինք որ կարենանք համարձա-
կի փութը շարիք համարել ազգին
մէջ փութաբարձ սիրոյ, եղբայրու-
թեան սգոյն, բարոյական ոյժը
այս ակնբերե տկարացումը: Ա-
տենք են այն սրբազան հուրը զոր
խնամոտ ձեռքով տնկիւնու մէջ
միշտ վառ պահելու ենք: Հետեւա-
բար կը կարծենք թէ ոճիւր մըն է
որ ամբողջ ազգին գէձ կը գոր-
ծուի, երբոր ո եւ է ազգային մը

գրութիւն կրնէ սեպնել, աղար-
տել, զրպարտել ուրիշ ազգային
մը, առանց նախապէս քննութիւն
կատարելու անոր վերագրուած եւ
պերելի հաշակուած տարբերուն
վրայ: Նոյնպէս ոճիւր մը կը հա-
մարենք, երբոր մէկը՝ լոկ կուսակ-
ցական հաշիւներով, կը կրծանէ
վարկ մը, անուն մը, համբաւ մը,
հեղինակութիւն մը որ այն միակ պա-
տրուակով որ ամենք հակառակորդ
ներ են եղած եւ կամ կրնան ըլլալ:
Ո՞վ չգիտիր որ հեղինակութիւն որ
անունները ոյժ մը կը կազմեն, ո-
րոնք յարգուելու են որպէսզի կա-
րող ըլլան իրենց դերը կատարել,
իրենց բարիքը, իրենց օգուտը
արտադրել յարմար ժամուն:

Եթէ շուտահաստեղ համար,
կրնանք ըսել որ հայերը, իբր ժո-
ղովուրդ, չէին եւ չեն կրցած բա-
ցառութիւն կազմելով, զերծ ու
անապարտ մնալ այդ բարոյական
ախտէն որ առաւել կամ նուազ կը
տիրէ ամեն երկրի, սակայն իսկոյն
պէտք է բնորոշինք որ միւս ազ-
գերուն մեր վրայ ունեցած առա-
ւելութիւնը այն է որ ատենք այդ
վատահամբաւութեան դրու թեանը
քննադատելու դարձանելու, ջնջելու
ոյժիւր եւ հաստատութիւններ ու-
նին, որոնցմէ մենք բոլորովին զուրկ
ենք: Անոնք ունին ախտը եւ ա-
նոր դարձմանը, միջնորդ մենք
այստեղ միայն: Այսպէս Եւրոպայի
էն շարախօս ազգին պատկանող մը
կրնայ դիմել պետական դատարա-
նի մը ոյժ, գործին միջամտելով,
կը զանազանէ մեղաւորը անմեղէն
եւ իր վճիռներով ախտին տարածու-
մը կարգիլէ: Մենք, հայերս, չի
ունենալով այդ առաւելութիւնը,
պէ՛թ բազմալու ենք պատուոյ առ-
եաններու սովորութիւնը մեր մէջ
ընդհանրացնել, որպէսզի դատա-
րանի համապատասխանող մարմին
մը կատարէ մեր ազգային գործե-
րու եւ վէճերու նկատմամբ իր բա-
րոյականացուցիչ դերը: անկողմնա-
կալ արդարութեան մը գաղափա-
րը մեր զլուխներուն վերեւը սա-
ւառնած պահելով:

Պատուոյ ատենի մը անհրա-
ժեշտ հարկը զգացնել առող իրն-
դիրներ կան զժողովրդաբար: Առանց
կարգէն է նաեւ Պ. Արփիար Ար-
փիարեանի մասին տիրած այն վե-
ճը որ այս օրերս նոր հրատարա-
կութեամբ մը վերսկսած ըլլալով,
կը սպառնայ շարունակուել ուրիշ
նոր հրատարակութիւններով, վեճ
մը որուն պատճառաւ երկու կու-
սակցութիւններ իրարու դէմ կը

կռուին, առանց տեսնելու որ ան-
կէ ծագած չարիքը կը հասնին այն
իսկ կուսակցութեանց շրջանակէն
զորս ապրող հայերուն ալ, ըստ
որում զուտ ցեղակցական կապը
որով միացած ենք օտար հոյին վը-
րայ եւ որ կազմուած է լոկ բարո-
յականի եւ պատուոյ զգացումներէ,
այս ամբաստանութիւններու ազ-
գեցութեան չի կրնար հետըհետէ
չտկարանալ եւ չանհետանալ:

Որովհետեւ այս չուենք թէ
այս վեճը որ հինգ տարի առաջ
սկսած ըլլալով, ամեն տարի առե-
լի վարկիւն աստիճանի կը հաս-
նի, պիտի կրնայ ինքնիրենը վերջ
մը ստանալ, որովհետեւ ակներեւ
ալ կը տեսնուի թէ այս վեճով
զբաղողներէն եւ ոչ մին պիտի ու-
զէ լուի եւ փակել այս գայթակ-
ղութեանց շրջանը, մենք համայն
ազգին օգտակար գործ մը ընելու
համզումով յորդոր կը կարգանք
ամենուն որ սովորութիւն ընեն
այս տեսակ պարագաներու սէջ
պատուոյ ատեն կազմել եւ անոր
թողուլ ճշդել ճշմարտութիւնը եւ
հաշակել անմեղն ու մեղաւոր:
Այս գաղափարին իբր հետեւանք
եւ իբր առաջին գործադրութիւն
կ'առաջարկենք վերոյիշուել երկու
կուսակցութեանց որ համաձայնին
ընտրել պատուոյ Ատեն մը, որուն
պաշտօնը ըլլայ լսել Պ. Արփիար-
եանը եւ անոր վերագրուած ամբաս-
տանութիւնները, եւ բոտ այն վը-
ճիւ մը տալ որ վերջնական եւ պար-
տաւորիչ ըլլայ երկու կուսակցու-
թեանց համար:

Մենք ասիկա ո՛չ միայն կ'առա-
ջարկենք ալ եւ կը պահանջենք,
որովհետեւ գոյ ծին մէջ կայ ոչ թէ
աս կամ այն կուսակցութեան շա-
հը, այլ կուսակցականնէն վեր-
ազգային ընդհանուր շահ մը: Մենք
ապահով ենք որ մեզի ձայնակից
են բոլոր այն բարեմիտ, առանց
կրքի եւ աղբիւ ազգայինները, ո-
րոնք առանց այս կամ այն կու-
սակցութեան պատկանելու, առանց
յեղափոխական կամ յեղափոխու-
մէր ըլլալու, կը հաւատան որ ժո-
ղովուրդ մը չկրնար ապրիլ եթէ
անոր մէջ բարձր չտիրէ պատիւը
եւ պատիւի նախանձախնդրութիւ-
նը: Ունենանք այս նախանձախն-
դրութիւնը իր օրինաւոր միակ
ձեւին մէջ որ է դատաստանը:
Կը խնդրենք... պատուաւ:

Ժամ խմբագրութեան մեր այս
անկողմնակալ կոչումը հրատարա-
կել թերթին առաջիկայ թիւին
մէջ եւ ընդունել մեր յարգանաց
հաւաստիքը:

Յ. Խսկէնաւէր Կրպ. Յակոբեան

Յ. Գ.—Սոյն նամակը երկու օ-
րինակ գրուած է, մին զրկուած է
Մարտի եւ միւսը՝ Դոքտորի պա-
տուարժան խմբագրութեանց ի հը-
րատարակութիւն:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀԱՆՈՐԴԵ ԵՒ ՊԱՐՈՆԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Խմբագիր

Պոլսոյ մէջ հրատարակուող «Սուր-
հանդակ» անուն լրագիրը իւր 319 թիւ
եւ 15 մարտ 1900 թուականաւ չորեք-
շաբթի օրուան թերթովը՝ Ազգային
քրոնիկ վերնագրին տակ Պուլկարիոյ
այցելու հովիւ Գերապատիւ Բարթոլոմէ-
մէոս վարդապետ Պաղճեանի պաշտօնին
արդիւնքը քննադատելով՝ իւր քննա-
յատական խորհրդածութեանց իբրեւ
յեշարան ի մէջ կը բերէ Վստնայի մէջ
վախճանեալ Տօքթօր Թովմասեանի եւ
իւր աները Աւետիս Պարոնեանի յու-
ղարկաւորութեանց հանդէսներուն նը-
կատմամբ՝ Վստնայի Պատ. Ազգ. Թա-
ղական խորհրդոյ եւ հանգուցելոց ըն-
տանեաց միջեւ ծագած խնդիրներուն
մասին իրեն հաղորդուած լուրերը, եւ
առանց անոնց ստուգութիւնը հաստա-
տելու այդ հետեւութեամբ թոյլ կուտա՛մ
իրեն թէ՛ Գերապատիւ այցելու հովիւն
եւ թէ՛ Վստնայի Ազգ. Թաղ. խորհրդոյ
պաշտօնները անուանարկելու ջանա՛մ
յաջա իւր ընթերցողաց:

Այսպիսի դիւրահաւան եւ միամիտ
թերթի մը մասին իմ ըսելիքներս խնդ-
րոյն վերջաւորութեանը թողլով՝ իբրեւ
ճշմարիտ իրապել բոլոր եղելութեանց՝
ներկայիւս կը յայտարարեմ թէ, յիշեալ
թերթին մէջ այդ երկու նշջեցելոց յա-
ղարկաւորութեանց հանդէսներու մա-
սին գրուածներն բացարձակապէս սուտ
են: Հետեւաբար պարտ անձին կը հա-
մարի՛մ հերքելով այդ սուտերն մերկա-
ցնելու բացարձակ ճշմարտութիւնը:

Անցեալ զեկտեմբեր ամսոյ մէջ տե-
ղս կը վախճանի Աւետիս Պարոնեանի
փեսան Տօքթօր Ե. Թովմասեան, հան-
գուցելոյն ընտանեացը կողմանէ առաժ-
նարոյժ Տիար Յ. Ս. Փափագեան կը
ներկայանայ տեղոյս Ազգ. Թաղ. խոր-
հրդոյ եւ կը խնդրէ որ, յուղարկաւո-
րութեան հանդէսը կարելի եղածէն ա-
ւելի փառաւոր կատարուի եւ որոյ շը-

քեզու թեան համար բնաւ ծախս չը խը նայուի. Թաղ. խորհուրդը իւր սակագնոյ մէջ արտակարգ թաղման աստիճանը յոյց կուտայ իրեն, որ առանց ուղեկու երկար բարակ վայն քննել կը կրկնէ, հանդէսին կարելի եղածէն աւելի չքեղութեան համար բան մը չը խնայուի, խոստանալով միանգամայն թէ, լիովին պիտի վարձատրուի Թաղ. խորհրդոյ աշխատութիւններն այդ մասին. Թաղ. խորհուրդը Տիար Յ. Ս. Փափագեանի պատուաւորութիւնը ճանաչելով՝ եւ հանգուցելոյն ընտանեաց եւ պարագայից նկատմամբ մինչեւ վերջին օրերը բոլորովին տարբեր գաղափար մը ունենալով՝ փափկանկատութեան անշարմար կը տեսնէ այդ ցաւալին վայրկեանին յուզարկուորութեան հանդէսին ծախսերը կանխիկ ուզել. հետեւաբար պակասութիւն մը չ'ըլլալու համար՝ ինքն անձամբ կը ձեռնարկէ հանդէսին կարգադրութեան եւ ամբողջ օր մը կը զբաղի անոր պատրաստութիւններովը եւ իրաւ յուզարկուորութեան հանդէսը վառնայի մէջ նմանը չը տեսնուած քեղութեամբ կատարուեցաւ, զոր կըստու գինն նոյն իսկ Տիար Յ. Ս. Փափագեանի առ Թաղ. խորհուրդն ուղեւալ նամակները:

Հետեւեալ օրը թաղականութիւնը իւր հաշուեցուցակը կը ներկայացնէ Տիար Յ. Ս. Փափագեանի, որոյ գումարը կը հասնէր 853.95 ֆրանքի. որոյ մէջ հասկցուելով եկեղեցւոյ, վարժարանաց, քահանայից, դպրաց դաստան, եկեղեցւոյ այլ աշխատութեաց, դաղաղակիրներու, մեռել լուացողին, գերեզմանափորին, պակակիրներուն եւ այլոց իրաւունքներու, հանդէսին համար գնուած գանազան կերպաս, ժապաւէն եւ մոմերու արժեքները. մի քանի օր վերջը 95.50 ֆրանքի թերհաշիւ մը միայն կը զրկուի Թաղ. խորհուրդոյ վճարելու համար անմիջական ծախսերը, մնացորդը երկու օրէն կարգադրուելու խոստումով:

Կանցնին օրեր եւ Թաղ. խորհուրդը իրաւ քաղաքավարական նամակաւ մը միացորդ գումարը կը պահանջէ Տիար Յ. Ս. Փափագեանէ, որ նամակաւ մը մի քանի օր կը յետաձգէ վճարումը. դարձեալ կանցնին օրեր առանց արդիւնաւոր պատասխանի մը եւ այսպէս փափկանկատ ոճով մը կը փոխանակուին մի քանի թղթակցութիւններ առանց արդիւնքի. Փափագեանը իր մէկ նամակովը կը խոստովանի խորհրդոյ իրաւունքը եւ իր ամօթով մնայր հաշուոյ վճարման յապաղմանը պատճառաւ, եւ կը խնդրէ միօրինակ 2 նամակներ ուղարկել քիչ մը աւելի ազդու ոճով գրուած՝ մին իրեն եւ միւսը հանգուցելոյն ընտանեաց արագացնել տալու համար հաշուոյ վճարումը. այս ալ կը գործադրուի եւ ի պատասխան որոյ հաշուոյ չափազանցութեան զիտողութիւններ կըլլան թաղական խորհրդոյ, մանաւանդ 250 ֆրանք Աղգ. Երկսեռ վարժարանաց անուան իրիւն նուէր գրուած գումարին. Թաղականութիւնը կը բացատրէ թէ այդ նուէր չէ, այլ բացառիկ թաղման հանդէս ուզողէ մը, ըստ սակագնի, իբրեւ պարտաւորիչ տուրք կը յանձնուի եւ նոյն օրը վարժարաններն ի նշան սղոյ կը փակուին եւ վարժարանին դուռը սեւ չլարչով մը կը պատուի. ինչ որ արդէն ըրած էր Թաղականութիւնը:

Ասոր վրայ Տիար Յ. Ս. Փափագեան նամակաւ մը կը պատասխանէ թէ ընտանեկան ժողովը պիտի կարգադրէ այդ հաշիւը որ չուզէր ներկայացուած ամբողջ գումարը վճարել, հետեւաբար զինքը խորհրդոյ առջեւ պատասխանատուութեան գերծ անուանելով յիշեալ ընտանեկան ժողովին վրայ թողուլ կը ջանայ խնդիրը:

Արդէն ամիսներ անցած լինելով եւ թաղականութիւնը այս ամուլ թղթակցութեանց վերջը չը կարենալով առնուի, կը ճարտահատի եւ այս հաշուոյ համար միակ պատասխանատու Յ. Ս. Փափագեանը ճանաչալով՝ վերջին գիր մը կը զրկէ իրեն եւ կը հրաւիրէ զինքը ի յարգանս պատուաւորութեան վճարել այդ գումարը. հակադարձ պարագային իր խոստումը յարգել տալու համար հարկ եղած սեղ գիծելիքը ազգաբարեւրով իրեն. Փափագեան խիստ ծանր եւ անուր նախադիմարով լի նամակաւ (*) մը կը մերժէ վճարումը եւ այսպէսով ամիսներ ի վեր մինչեւ այսօր վճարում չէ այդ հաշիւը:

Վրայ կը հասնի այս ամսոյ մէջ Աւետիս Պարոնեանի մա՞ը եւ առաւօտուն քաղքէս Նիսիպարակներուն պատերազմ վրայ կը տեսնուի ընտանեաց կողմանէ փակցուած մահազգը, ծանուցանող հանգուցելոյն մահը կատարուելիք յուզարկուորութեան հանդէսին օրը, յետ որոյ հանգուցելոյն «մարմինը ազգ. գերեզմանատուն» ամփոփուելիքը: Ինչն օրէն յետոյ Պ. Իգնատ, հանգուցելոյն եղբորորդին, Թաղ. խորհրդոյ կը ներկայանայ Խ. Կո. զէ. յորդակաւորութեան հանդէսի սակագինը տեսնել. Թաղականութիւնը կը բացատրէ թէ այդպիսի քննարկաց համար Արտակարգի առաւանդը վար լուչ է. Տիար Իգնատ թէ արտակարգ չի եւ թէ Ա. կարգի աստիճաններուն քաղաքականութիւնները ընդ օրինակի տալով կը փափաքի ընտանեաց հետ խորհրդակցիլ, ինչ որ թոյլ կը տրուի իրեն, եւ թաղականութեան կողմանէ կատարուելու որ հանգուցելոյն մարմինը եկեղեցւոյ բակին մէջ ամփոփուի, որն որ թէ ընտանեաց եւ թէ ազգին պատիւ մէ. ասոր համար օրինակ կը բերէ հանգուցեալ Ռուբէն Մանուկեանի վախճանումը եւ եկեղեցւոյ բակին մէջ ամփոփուիլը, բացատրելով միանգամայն թէ, ասոր համար տեղական կատարութեան թաղականութիւնը հրաման պէտք է առնուի, որ միայն այն պարագային մէջ կարողանուի, երբ հանգուցեալը բարձր աստիճան եկեղեցական մէ, կամ ժամանակաւ տեղւոյն Աղգին յիշատակի արժանի բարբարոսութիւն մը ըլլած է կամ այժմ կտակած է ինչի եւ կամ իր ընտանիքը այժմ բաւական գումար մը կուտայ ուղղին. հոս յիշուած է իրեն հանգուցեալ Ռուբէն Մանուկեանի համար նուիրուած 4000 ֆրանքի գումարը եւ կրկնակի կերպիւ խնդրուած է իրմէ որ այս առաջարկը ընդունի հանգուցելոյն ընտանեաց կողմանէ ի պատիւ իրենց եւ յօյուս ուղղին:

Տ. Իգնատ կը մեկնի ժամէ մը վերադառնալու. խոստումով եւ կը գառնայ 2 ժամէն թաղականութեան յայտնելով թէ արտակարգի թաղման աստիճանը չէ ընդունուած կը փափաքին Ա. կարգի աստիճանը առնուի, կը յայտնէ նաեւ թէ, եկեղեցւոյ բակին մէջ ամփոփուելու ալ չէ ընդունուած, գերեզմանատունը աւելի օգտակար սեղութիւնով. յարելով միանգամայն թէ ինք միտնելէն վերջը օտքէն բռնեն ծովը նետին նշանակութիւն չունի: Թաղականութիւնը շատ կը ջանայ համոզել Պ. Իգնատը, որ ընդունի մարմինը եւ կեղեցւոյ բակին մէջ ամփոփուելը, այդ առթիւ խոստանալով աւելի դիւրամատ չելի պայմաններով յաջողցնել գործը թաղականութեան քով, նոյնպէս Ա. կարգի թաղման աստիճանէն այնքան զոհ չմնալիքին բացատրուել վերջ:

(*) Յիշեալ խիստ ծանր նախադիմարներուն ու վիրաւորանքներուն համար, կրնանաք թէ թաղականութիւնը որոշած է տեղական իշխանութեան պատասխան յանձնել խնդիրը:

արտակարգ թաղման աստիճանը միայն այսօրինակ ընտանեաց համար յայտնուած լինելը յայտնելով. սակայն ամեն ջանք անօգուտ եղած է զինքը համոզելու երկու ձեւին համար այն Հոս թաղականութիւնը կը փորձէ Տ. Իգնատին միջամտութիւնը խնդրել հանգուցեալ Տօթթօր Թովմասեանի թաղման հաշուոյ կարգադրութեանը համար եւ որով վերջ տալու այդ անհաճոյ խնդրոյն, նկատի առնելով թէ այժմ երկու քննարկ մի ընտանիք կը կազմեն. սակայն Պարոնը յանապաղելու կը պատահանէ, չեթէ այդ օրինակ հաշիւներ խառնուին Պովմասեաց եկեղեցին պիտի զիմէ:

Թաղականութիւնը կը հասկցնէ թէ սպասելիք մը չէ իրեն առաջարկուածը, այլ պարզ միջամտութիւն մը, եթէ կարելի լինի, թէ ոչ ըսելիք մը չունի:

Հետեւաբար լաւ ստուգած է թէ թողութիւն տուաւ է ու եւ ազգային մը միջամտած լինի այդ մասին, յուզարկաւորութեան հանդէսը կը կատարուի համաձայն իրենց վճարած Ա. կարգի թաղման աստիճանին: Սուտ իսկ է այն լուրը թէ Տ. Սարգիս քահանան տեղւոյն աղջկանց մասնաւոր վարժարանին կողմանէ ի պատիւ հանգուցելոյն եկած ուսանողաց պատգամաւորութիւնը եկեղեցիէն արտաքսել ուզած լինի, որոյ համար տեղական լիերթիւն մէջ արդէն հերքու մը տեսնուած լինելով չարժէք այդպիսի բնականին հակառակ առաջ մը վերայ երկարաբանել:

Բացարձակ սուտեր են նաեւ թէ հանգուցելոյն ընտանեաց կողմանէ թաղականութեան 3000 ֆրանքի ու եւ առաջարկ մը եղած լինի մարմինը եկեղեցւոյ բակին մէջ ամփոփուելու համար. ասոր բացարձակ սուտ լինելը թաղականութեան վերոյիշեալ աղաքանք ու ջանքերէն զատ, նոյն իսկ թաղականութիւնը տեսնելէ առաջ իրենց հրապարակ հանած մահազգն ալ կապացուցանէ, որոյ մէջ այսպէս յայտնուած էր իրենց որոշումը: Իրաւ է թէ թաղականութեան պէս գործունէ գանազան անձնատուրութիւններ ալ շատ ջանացած են զիրենք համոզելու այդ քանին, սակայն իրենք պարզապէս դրամ չտալու համար գանազան անպատուաբար պատրուակներով մերժած են:

Սոսոր սուտ մ'է նաեւ թէ թաղականութիւնը ներքու խնդրող թուղթով մը չգործուած սխալ մը ուղղելու ջանացած լինի. ընդհակառակը իրենք խնայալով Տիար Յ. Ս. Փափագեանի յիշեալ նախադիմար գրութեան վրայ ընդհանուր գաղափարներ գիտնելու համար թաղականութեան կողմանէ տրուած որոշումը, որ բաւական ծանր պատժող կրնար ենթարկել նամակագիրը միջնորդները դրած են այդ չընելու համար:

«Սուրհանդակ» թերթը իր միամտութեամբը այս ամեն տեսերուն վրայ յենելով, Թաղ. խորհրդոյ հասցէին սակարկութիւններ ընելէ յետոյ, կը յաւելու թէ ամեն տեղ Պարոնեանի պէս ընտանիք չի գտնուիր, կերելի թէ ինքը կամ իրեն յատուտ բաւական գոհ մնացած լինելու են այդ սուտերուն հրատարակմամբը. սակայն եւ կը կարծեմ հաւաստի իսկ եւ թէ՛ այժմ եւս թաղականութեան անդամները այնպիսի անձնատուրութիւններ են որ եթէ ապացուցուի իրաւի թէ իրենց կողմանէ ու եւ ապօրինաւորութիւն եղած է ազգը այդպիսի շահ մը զրկելու, պատրաստ են իրենք վճարել այդ գումարը, եթէ հակառակ պարագային այդ Պարոնեան ընտանիքն ալ պարտաւոր լինի զայն վճարել, զոր այնչափ առատաձեւուն կը ներկայացնէ Սուրհանդակ թերթը:

Իսկ յիշեալ ընտանիքին որ աստիճան առատաձեւուն ըլլալը, եթէ վերոյիշեալները բաւական չեն հասկցնելու

Սուրհանդակի Տիար խմբագրին, եւ մէջ պիտի բերեմ հետեւեալներն ալ որ տեղի ունեցած են հանգուցելոյն մասին, ընէն առաջ առանց հսկասկութիւն ունենալու ու եւ թաղականութեան հետ:

Երկու տարի առաջ սեղոյն հրկիւն եալ ազգ վարժարանին շինութեան տեսնելու քաղաքի հանգանակութեան մասնակցելու համար, նոյն ժամանակաւ թաղականութիւնը անձամբ իր սուղ երթելով երկուր համոզման խառնիք յետոյ միայն կրցած է փրցնել իր ժաւատ ձեռքերէն նաքայէն մը. յետոյ թաղականութեան զգաւորացի խառնիքներուն վրայ հաղիւ Նարոզներ երկուր բարձրացուցեր է. մինչդեռ տեղւոյն արհեստաւոր դասակարգը ուրախութեամբ 100-ական ֆրանք նուիրած են: Անցեալները սակեղց համար Պատրիարքարանէն եկած շրջաբերականին վրայ ինչպէս շատերուն, իրենց ալ անձամբ գացած էր Գեր. այցելու հաւելու. իսկ սուրճէ մը դատողիչ չէր կրցած ստանալ այսքան պարտաւորիչ հանգանակութեան մը համար, թող իսկ արուած չէր հանգուցելու Տիար Աւետիս Պարոնեանի երեսը տեսնելու խոնջումը գատ. մեր աչքերուն առջեւ է հանգուցեալ Տօթթ. Թովմասեանի ալեւոր 65ամեայ մօր վիճակը, որ իր զաւկին կենդանութեան տեսնելուց ցած բարեկեցիկ վիճակին հակառակ, այսօր չոր տախտակամածի վրայ ձգուած է, ի նորհա անուղական բարբարոս Պարոնեան ընտանիքի առատաձեւութեան:

Իմ նպատակս յիշեալ ընտանիքը վարկել ընել չէ, սակայն չէի կրնար անտարբերութեամբ կարգաւ Սուրհանդակի մէջ իրողութեանց այսքան բացարձակ խեղաթիւրումը, նոյնպէս եւ յիշեալ ընտանիքը բարցրացնելու համար Գեր. այցելու հովուին եւ թաղականութեան զէմ այնքան անբաւարար եւ անտեղի յարձակումները. ցաւայի հոն է որ Սուրհանդակի նման Պոլսոյ առաջնակարգ մի թերթ թոյլ կուտայ իրեն առքան իրամտութիւն ցոյց տալ իր արժանիքը օտանկութիւններով, ով գիտէ ինչ նկատուեցներով, եւ որով իր ընթերցողաց գաղափարութիւնները մոլորեցնելու սուտ եւ անտեղի լուրերով ընդունուած կանոն ու սովորութիւնէն որ այսպիսի տեղեկութիւններ կանխաւ առանց ստուգուելու չեն հրատարակուիր:

ԻՐԱՆԻՆԻՔ

Վառնա, 27 մարտ

1800-1900

ԱՌՍՏԻՍ

(Շարունակ. Աստուրք քուէն)

Յիշանք-Ժողով պատանի կարգը շատ տաղանդաւոր միջոցի մը կուգար Աւստրիական կայսրութեան ղէկը ձեռք առնելու: Միջառնները յազուա մերին աստիճանի էր. ինչպէս նաեւ վիճնալի հետ կապուած միւս ազգերն ալ իրաւաւ վիճակի մը մէջ չէին:

Նոր կայսրը իր գահակալութեան հետ շնորհեց սահմանափակութիւն մը եւ հաւատարմութեան օրէնքը. Բայց կայսերական արքային հաճութիւնը չազդեց հանրային յուզման վրայ Միւստաք յայտնի ապստամբացան վիճնալի ղէկ:

Հոնգարական այս մեծ շարժման գլխավոր կեցաւ Լուի Քոչուսը և իւր առօրեական խոսքերով զարմանալի տարաբնույթ անհատական կայսրութեան ամեն կողմերն ալ :

Աւստրիա լուրջ միջոցներու դիմաց Մաճառական ապստամբութիւնը զսպելու համար . որուն հետ վիճարկելի և Լուսապարտայի խառն վեճի իւրեանցն ալ ծայր տուին : Ի տարիս մէջ Ռուսացի իսկ Հուն գաղութի մէջ վիճարկչական և Եւրոպիայ կոտորակ կռիւններ կը մղէին : Երկար և արիւնահեղ մարտերէ յետոյ Աւստրիա Ռուսաց օգնութեամբ յաջողեցաւ Հունգարիան ընկճել մի. եւոյն ատեն իտալիան ալ զսպել :

Հունգարական այս մեծ շարժման ատեն նշանաւոր եղան Քոչուսի գլուխ Միտրաչի և Քրապկայ : Մաճառական այս ապստամբութեան միջոցին բնական եղող տարագրութեանց երբ քաղաքակիրթ և քրիստոնեայ Եւրոպան Աւստրիայ խնդրանքին վրայ կը մերժէր տարագիր Մաճառականներուն հիւրընկալութիւն տալ : Սակայն Մէճիտ կայսրը սիրով հիւրընկալեց իր երկրին մէջ և տեղ տուաւ այդ արի տարրին :

Յիւնացի ժողովք կայսրը Մաճառականներուն և իտալացւոց ընկճուելովը վերամիտայ վրայ գերագոյն հիգի նախաձեռնեց ձեռք կը բերէր , ուսկից կըսկսէր Բրուսիոյ և Ալբանիոյ միջոցով , որ վերջ ի վերջոյ ստակալի պատերազմի մը յանգեցաւ : Այստեղիւնք այսպէս յախնալուած կայսերական հրովարտակով մ'ալ վերցուեցաւ Մաճառականներուն և Հապսպուրկեան տունը նորէն սկսաւ բացարձակ միպետութեամբ վարել երկիրը և ամեն կողմ պաշարման վիճակ հաստատուեցաւ :

Կայսրը այդ սեղմ և կոշկանդուած վիճակին վերջ մը տուաւ այն ատեն , երբ կամուսնանար Պաուլինայ ի Մաքսիմիլիէն Դուքսին աղջկանը Եղիսարէթի հետ :

Աւստրիա այս միջոցին մատնուեցաւ նաև տնտեսական ահաւ գին տագնապի մը , բնական հետեւանք երկարատեւ ալիստի խըռովութեանց : Կայսրը իր ալլազան և արդէն դժգոհ ցեղերը մէկ մ'ալ տիրող տնտեսական տագնապէն օգտուելով նորանոր խռովութիւններու գուռ չբանալու համար ինքնաբերաբար սահմանադրութիւնը տուաւ , որով Աւստրիական կայսրութիւնը կազմող ամեն ալ գեր իրենց մասնաւոր ժողովները ունեցան և կայսերական աւագախորհրդին մէջ ալ իրենց նուիրակները հաւասար իրաւունքով ու տնտեսական Մաճառականները չուղեցին գոհանալ այսպէսով և ձեռք բերին ներքնապէս լիակատար և անկախ վիճակ մը և այսօր Ալբանիոյ հետ միայն կը կապուին յանձին կայսեր որ է միանգամայն թագաւոր Հունգարիոյ :

Ինչպէս վերը ըսած էինք , Ա-

ւստրիայ Գերմանական սահմաններէն բնէ մէջ տիրացած գերակշիռ դիրքը Բրուսիոյ հաճելի չըլլալէն զատ կարեւոր խոչնդոտ մըն էր Պէրլի նի դահլիճին նպաստանքներուն իրազարմանը : Աւստրիայ այս բարձրացումը ինչպէս ցոյց տրուեցաւ կը մղէր Բրուսիական վարչութիւնը մրցիլ Հապսպուրկեան դէմ : Այդ մրցումը խուլ պայքարի մը և միջնա իջկ յայտնի հակառակութեան յանգեցաւ , մասնաւոր Պիզմարք կոմսին օրով որ Բրուսիոյ վարչապետն էր :

Պիզմարքի մեքենայութիւնները և իր արտաքին աշխարհափորութեան ճարտարութիւնը վերջապէս յառաջ բերին Աւստրիայ և Բրուսիոյ մէջ այն պատերազմը որ ժխտելի դարձաւ պատմութեան մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ ոչ միայն ռազմական տեսակէտով , ալ եւ սպայի մէջ քաղաքական մեծ յեղաշրջում մը առաջ բերած ըլլալուն համար :

Բրուսիա-Աւստրիական այս մեծ պատերազմը Բրուսիական բանակին համար փայլուն յաջողութեանց շարք մըն է , որոնց մէջ կարեւոր տեղը կը բռնեն Հոնգարիայի թա. գին ժառանգ Յոլտերիկ արքայորդին և Մոլթիթ Մարշալիտը : Այդ ահարկու պատերազմին գրեթէ վերջաբանը դրուաւ Սառաւոյի ահաւոր ճակատամարտը , ուր յաղթութիւնը մնաց Բրուսական բանակին : Աւստրիա ընկճուած գինադադար պահանջեց ինչ որ մերժուեցաւ , առով հարկադրուեցաւ գիծիլ Նաբուլէոն Գ. կայսեր ինքընով որ խնդրոյն միջամտէ : Յիւնացի ժողովք Նաբուլէոն Գ. ի ներկայացուցած խնդրանքով կը խոստանար նաեւ վենետիկն ու Աւստրիայ ձեռքին տակ գտնուող իտալական հողերը թողնուլ իտալիայի :

Բրուսիա բաւական ընդդիմութիւններէ յետոյ հաճեցաւ խաղաղութիւնը կնքել . պատերազմին վերջ տրուեցաւ Փրսկայի դաշնադրով որուն համաձայն Աւստրիա թէի իր սմբողութիւնը կը պահէր բայց միանգամ ընդ միշտ կը վտարուէր Գերմանական դաշնակցութենէն և կը հրաւիրուէր վճարել պատերազմական տուգանքը և վենետիկ ալ կանցնէր իտալիայի : Այսպէսով Գերմանական մանր պետութիւնը ազատուելով Ալբանիոյ իր ապաստանեցան Բրուսիոյ հովանաւորութեան տակ :

Այս թուականէն յետոյ Աւստրիա եւրոպական մեծ և ուռաջնակարգ պետութեանց շարքին մէջ գրտնուելով հանդերձ քաղաքակիրթ աշխարհի պաշտանական շրջանակին մէջ հեղինակաւոր և զօրեղ ձայն մը ունենալէ գաղթած է : Վերջին Ռուսո-թուրք պատերազմի ատեն յաջողեցաւ Պոսնա Հերցեգո իւրացնել և այսպէսով ճանաչող մը բանալ իր Պալքանեան թերակղզիին նկատմամբ ունեցած մտադրուութեան իրագործմանը համար : Սակայն քիչ մը կասկածի ներքեւ կրնայ Աւստրիական երկրակալութեան դիտումներուն յաջողութիւնը :

Նը , երբ ինկատի առնենք այդ բազմագոյն կայսրութեան ներքին բաւական խախտութիւնները : Այսօր կայսրութիւնը կազմող ալլազան ցեղերն ամենքն ալ իրենց լուրջ խնդիրներն ունին , վիճնալի Դահլիճը լիջօրէն մտածեցնող , խնդիրներ , որոնց շատ դիւրաւ չի պիտի կրնայ դիմադրել քանի որ այդ խնդիրներուն արժարժանքը կը նպաստէ ամենէն աւելի իրեն դաշնակից և դարձի Գերմանիան :

(Շարունակելի) Ս.

ՆԱԽԱԿ ԽՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշա , 24 մարտ . . . Խմբագիր ,

Ձեր 22 թիւ «Իրաւունք»ի մէջ հրատարակուած նամակը հոս ալ շատերուն վրայ լուռ տպաւորութիւն թողոց , և շատ արդարացի գտան հրաւերը երկու կուսակցութեան որ կընէ , թէ ժամ առաջ պատուոյ տեսան մը կազմեն չէզոք անձերէ , մաքրեն հրապարակը կասկածելիներէ և դաւաճաններէ , միեւնոյն ժամանակ վրջ մը տան ըսի ըսանքու : Արդէն Դուք առաջինը եղաք հրաւեր կարգացող ձեր թերթին միջոցաւ , թէ ժամ առաջ խնդիրը լուսարարուի և ըստ այնմ խօսքի պէտք եղածը : Յաւալի է որ ուրիշներ առանց ձեր օրինակին հետեւելու վճիռ արձակեցին . որով ուղղակի իրենց անկախ բարոյականը ցոյց տուին :

Ձեր քննադատութեան խթանը միշտ անպակաս րէք այսպիսի կենսական խնդիրներու համար . որոնք ազգին թէ բարոյականին և թէ նիւթականին հետ կապ ունին . ո՞վ ինչ կըսէ թող ըսէ նշանակութեան զուրկ է . անոնց ըսածները լրջօրէն կարգացողները կարող են հասկնալ ձեր գրութիւններն ալ անհնայն ալ :

Ես և ինձ հետ շատեր լուռ գտած եմ ձեր ծրագիրը և սկզբունքը հանդէպ կեղծարարներու :

Յարատեւութիւն կը մաղթեմ :

ԼՐԱՔԱՂ

—Վիհ . Հայրապետ օրհնութեան գրեթէ զրկած է հետեւեալ անձերուն .

Տ. Գրիգոր Խեղուսեան որ Ս. Գեղարդի վանքը իր ծախքովը նորոգած է .

Տ. Յովսէփ Աւետիքեան որ հրկու մողական լապտեր նուիրել է Գեղարդեան Ճիւղարանին :

Տիկ. Մկրտիչեան որ 100 բուրլի նուիրել է Մայր Աթոռին :

—Թերթերու մէջ ցուօք կը կարդանք թէ վիճնալի Միսիթարեանց արքայալը և ծանօթ բանասէր Հ. Արսէն Արքեպիս . Այտրեան ծանրապէս հիւանդացել է և թէ բժշկները յուսահատ են իր վիճակէն : Ասկէ երեք շաբաթ առաջ Աւստրիայ կայսեր հրաւերով ունկնդրութեան մը ներկայ պիտի գտնուէր : Այտրեան արքեպիս իր տկարութիւնը ծանուցանելով ներողութիւն կը խնդրէ Յիւնացի-

Շօղէֆ կայսրէն՝ ունկնդրութեան չկրնալ երթալուն համար : Կայսրը պալատական պաշտօնեաներու միջոցաւ քանի մը անգամ որպիսութիւնը հարցուցած է յարգելի հիւանդին :

—«Մարտ»ի վերջին թիւին մէջ կը կարդանք հետեւեալ յայտարարութիւնը .

«Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութիւնը ստացած է (փետրուարի վերջերը) Դաշնակցական կուսակցութեան բերան Դըրոյակ թերթին յաւելուածը : Հընչակեան կուսակցութիւնը ամենամեծ խտութեամբ և անաչառութեամբ պիտի կատարէ իր պարտականութիւնը այն ամբաստանութեանց մասին զոր այդ յաւելուածը կը պարունակէ .»

—Դիւղափաճա Տ. Վէնստն Գաւապեան Հայերէն Ներմաշափ պատրաստած ըլլալով , մէյ մէկ հատ վիհ . կաթողիկոսին , Պատրիարքներուն և Միսիթար արքայալրերուն նուիրած է : Վիհ . կաթողիկոսը օրհնութեան կոնդակ մը զրկած է յիշեալ դիւղափաճանին :

—Ս. Էջմիածնայ Սինօգը վերջին ամիսներու մէջ երկու պսակ լուծած է , մին Թիֆլիսէն և միւսը Աղէքսանդրապոլէն . այդ անձերը բողոքած են իրենց կողմ ապօրէն և անբարոյական ընթացքին դէմ : Սինօգը մանրամասն քննութենէ ետք լուծել է այդ պսակները , և հրամայել է այրելուն ուրիշի հետ նորէն ամուսնանալ :

—Շուշիի մէջ երկու քահանաներ 10 տարեկան անչափահաս աղջիկ մը տարիքը առած երիտասարդի մը հետ պսակել են : Վիհա. փառ Հայրապետը այս բանը իմանալով , անչափահասներու ամուսնութեան արգելք դնելու համար վերջերս կոնդակ մը զրկած է Շուշիի թիւմը :

—Արժ . Թորոս քահանայ ջուղայիցի Մանչեսթրի մէջ Եկեղեցի անուն կրօնական ամսաթերթի մը հրատարակութեան ձեռնարկած է : Յիշեալ քահանայի ձեռնհասութիւնը արդէն ճանչցած ըլլալով , իր ձեռնարկին յաջողութիւն և յարատեւութիւն կը մաղթենք :

Մանչեսթր հանուր աշխարհի առեւտրական ամենազլխաւոր կեդրոններէ մին ըլլալով և հոն բաւական թուով հայ վաճառականներ գտնուելով , կ'ապաստենք որ ազգին մէջ ուրիշ պակաս մը լեցնէր այդ քաղաքը , այսինքն տնտեսագիտական և վաճառականական հայերէն թերթի մը գոյութիւն տար . որմէ շատեր կրնային օգտուիլ :

—Յանցաւոր մօր մը զղումը անուն բարոյալից թատերախաղը Անգամ ըլլալով վաղը իրիկուն պիտի ներկայացուի վէսէլօ հայ թատերախմբին կողմանէ ի նպաստ համակրելի դերասանուհի Տիկին Գնար Սըվաճեանի :

Տիկինը իր ձեռքերովը Պուլկա-

բաժնայ թափարակներն պատիւ բե-
րող առաջին զարգը ըլլալով, իր
բոլոր հանգիստատեմերուն, առանց
բացառութեան, համակրանաց ար-
դէն արժանացած է. ուստի աւել-
լորդ պիտ' ըլլար այս նպատակն
առթիւ զինքը յանձնարարել ժողո-
վուրդին քաջալերութեանը: Բայց
կարեւոր ու տխուր պարագայ մը
այսինքն իւր համակրելի ամուսնոյն
Տ. Արշակի արգի ծանրապէս հի-
ւանդ վիճակը, մեզ պարտ կը դը-
նէ այս անգամ ջերմիւ յանձնարա-
րել զիրենք:

ԻԽԹԱՐ

Բաղադրութեամբ ապօնէիներով զտե-
րեման օլընըր քի՛ կողմէն պէտէ-
լինին իւր ալթըր աղբորն պիւր
թէնիւր կէտեմարտնէր. բէշին
էտեմարտնէր շարթ իքէն, իշթէ
իւշինճի այ տա խիթամ պուլմագ
տա տրը:

ԹԻՐԻՔԻԱ ՀԱՎԱՏԻՍԱԹԸ

Բոհիթինատան վէ իւսկիւպտէն
ալընան էն սօն հապատիւներէ նա-
զարէն, մեզքիւր իքի շէհրիւրտէ
հիւթմ իտէն գարըշըգըգ էլտն տէ-
վամ իթմէքաէ օլուպ չարշըր վէ
թիճարէթ պիւսպիւթին թաթիլ
օլմը տըր:

—Ասկէրի լէվազիմաթն մէտա-
րիթինի գարալապիւմէք իշին
վերկիւրին նիւզտէ ալթըր զամմ
օլընմաւընը էմը իտէն պիր իրատէ
րէմալէն իւն օլմուշ տըր:

—Մէշնուր Ղազի Օսման բա-
շա պու տէֆա ճիտտէն վէֆաթ
իթմիշ վէ ճէնագէ ալալը զայթթ
պէօյիւք զիյնէթլէր իլէ իճրա օ-
լընմը տըր:

—Իւսկիւպ գարըշըգըգըտընա
պաշըճա սէպէպատտ օլընան իտրիս
պէյ նամ Արնափուտ զատէկեանըն
թէվգիթի իւզքիւրնէ էհալի սիւահ-
լանըպ մէրգուս պէյին սէրպէսթ
պրագըլմաւընը ճէպրէն թալէպ
իթմիշ տիր:

—Անատուրնըն չըմալ վիւայթթ-
լէրինտէ չըմէնտըֆէր եափմագ ի-
շին Ռուսիա վէ թիւրքիա պէյ-
նինտէ ճէրէեան իթմիշ մէսէլէ հադ
գընտաքի բէսմի էվրագ Պապը Ա-
լիտէն Ռուս էլշիսինէ վէրիւմիշ
տիր:

—Սթանպուլ էլշիւրին սօն տէ-
ֆա կէօմրիւկլէրին արթըրըլմաւը-
նա գարշը վէրմիշ օլտըգըտըր միւթ
թէֆիգ նօթայա ճէվապէն, Պապը
Ալի մէսէլէյի տէվլէթլէրին հադ-
գանիյէթշինալըղընա իհալէ ի-
տէրէք, կէօմրիւկլէրին արթըրըլ-
մաւընա տայիր քէնտիսինին սէլահի-
յէթտաւ օլտըղընը կէօսթէրմիշ վէ
մէզքիւր նիւալմամէնին մուվագ-
գաթ օլուպ մայիս 14տէ մէվըլը
իճրայէ գօնուլաճաղընը պէյան իթ
միշ տիր:

ՍՈՒՀԱՐԵՊԷ

—)(—

Աման Ռիւքըրըն Սալտիլտէն
ալտըլը մալիւմաթա նազարէն Պը-
լէօմֆօնթէյն վէ Պրանտֆօրտ
պէյինտէ շիտտէթլի պիր մուհա-
րէպէ վազա պուլմուշ տըր: Իշ-
պու մուհարէպէտէ Պօէրլէր 7000
քիշիւտէն իպրիւթ պիր ինկիլիզ
օրտուսըր վուրուպ կէրի սիւրէ-
պիւմիշլէր: Թէքըր Պրանտֆօրտ
տա 1000 քիշիլիք պիր Պօէր ա-
լալը 3000 ինկիլիզի շիտտէթլի
վուրուպիլէշլէր իսէտէ պու անտէ
ինկիլիզլէր 13,000 քիշի մուպէ-
նէթէ կէլտիքլէրինտէ Պօէրլէր կէ-
րի չէքիւթէլէ մէճպուր օլմըշտը:

—Պօէրլէր սօն միւսատէմէլէրին
սէմէրէսի օլտագ ինկիլիզլէրին
պիւթին մուհիւմ էվրագըտընը է-
լէ կէշիւրմիշլէր: մէզքիւր էվրագ-
լալտա ինկիլիզ օրտուսընը Օ-
ռանթ վէ թիւրանալալ իւզքիւրնէ
իճրա իտէճէկի հիւճիւմէլէրին բը-
լանըրը, բէպա Պիւլիւր էհալինին
ինկիլիզ հիւթիւմէթինէ գարշը պիր
տա հա սիւա հալմագ իշին փ-
գալաւտըգըտըր հէմին քիւղըտը
մէվճուտ իմիշ:

—Ինկիլիզլէր Մէֆքիւկտէն ալ-
թը միւ տա հա իլէրի կիթմիշ օլ-
մալա Պօէրլէրին չէտիտ պիր հիւ-
ճիւմի իւզքիւրնէ կէրի չէքիւթէլէ
մէճպուր օլմալը: պու գալկա-
տա ինկիլիզլէրին 20 էօլիւ 19
հարալը: Պօէրլէրտէն պիր էօլիւ
իքի հարալը տիւշմիշ տիր:

—Թիւրանալալ վէ Օրանթ մէ-
մալիքինտէ մուհարէպէյէ նիհայթթ
վէրաիւմէք իշին Պօէրլէրտէն էվ-
րալա վէ Ամերիգա տէվլէթլէրինէ
միւրաճաթլալ իթմէք միւրի-
յէթի իլէ պիր թագըմ Պօէր մու-
րախալալ «Քալըր» նամ ալման
վաւրընա իւզգիպէն հօլա չըգըշ-
լալ տըր:

ՄԻԻԹԵՆԵՎՎԻՅԷ

—)(—

Նայէ Ֆրայէ Բախէ կաղէթաւը
նըն պէյանընա նազարէն Աճէմիւ-
տանտա զապիթ վէ մուալիլէրի
հէփ Ռուս օլուպ չարթը իլէ Ա-
ճէմ քաղաք ալալալը թէշքիլ օ-
լընմը տըր:

—Լօնտրատան Բարիլէ վէրիլէն
բէսմի պիր մալիւմաթա նազարէն
ինկիլիզլէրա գրալիշտաւընը պէօ-
յիւք մալտուսը Բախէ տը կալ
սէրկիի ումուսինին քիւշաղընա
բէսմին հաղըր պուլուսուպ: ինկի-
լիզ շիւպէսինին ալըմաւընա տա
բիւսաթթ իտէճէք տիր:

—Հինտիստան վալիսի Լօրա Գըր
ղընըն Լօնտրայա վէրմիշ օլտըղը
պիր թէլէկրաֆա նազարէն Հինտիս
տանտա հիւթմ ֆէրմա օլան գըթ-
լըգ կիթմիկէ տէհէթլի սուրէթ-
տէ հալըմագտա վէ հալընըղ Պօմ
պու վէ ճիւղալալընա 1,250,000

քըշի տէ պուլընմագտա իմիշլէր:
—Կէշէն սէնէ Լա Հէյտէ թէ-
ճէմիւ օլընան Սուլի գօնֆէրտալն
տա Ֆրանսա մուրախալալ պուլիւն
Ս. տէլիւրնէլ մէզքիւր պօնիւ-
րանտան տօլալը պիր նալթ ի-
րաւը իլէ, շալ մալալալ պէյա-
նալմա պուլընմը տըր:

«Չօգըլալըն շալ գանըն հանլըն
տըր քի սուլի գօնֆէրանալընտան
պիր սէմէրէ հասըլ օլմամըշ օլտու-
նիւկիլիզ-թիւրանալալ մուհարէպէ-
սի ալըմագտան էվլէ տէվլէթլէր-
տէն սուլիւրէլէր պիր միւտալի-
լէ օլընմագտա գօնֆէրանալըն սէ-
մէրէսիլ օլտըղընա տէլիլ տա օ-
լընմագ. տէվլէթլէր պու միւտա-
լալէլի իթմէք իշին իքի թարաֆ
տալի գօնֆէրանալալ տալիլ օլմա-
լը իտիւր: Ֆրայաթ թիւրանալալ
մուրախալալ ինկիլիզլէրին իտ-
տաւը իւզքիւրնէ գօնֆէրանալալ գա-
պուլ օլընմագտալ, պիր ինկիլիզ-
լէր թիւրանալալին քէնտի հաթի-
միլէթլէրի ալթընա պիր էլալէթ
օլտըղընը իտտա իտուպ, ոքսի
հալինտէ ինկիլիզ մուրախալալը
գօնֆէրանալալ չէքիւթէլէր իտի-
լիւր պու տէրէճէ թէֆէրուսթիւ
կիրիշտէ իտիւք, իուրախալալըն
տալի ինկիլիզլէրայա գարշը, Լէհ
լէրին վէ Ֆինլանտալալըն Ռու-
սիայա գարշը, էլմէնիլէրին թիւր-
քիայա գարշը չէքէթլալը իլէ
մէշըլ օլմամըղ լաղըմ կէլէճէք ի-
տի: էլմէնիլէրտէն մուրախալալը
վէ չօգ արգուսալալ պիլէ կէօն-
տէրիւթի: պիրիսինիլ քի պու մի-
լէթ տէկիլ պիւլէրճէ իլալ հիւզ
պիւլէրճէ գըրըլալ թիւրքիա հիւ-
քիւմալալ օլան Սուլթանըն սայէ-
սինտէ: Ֆրայաթ թէֆէրիս օ Սուլ-
թանա պաշա պիր նամ վէրէճէք
տիր (ուզուս ալըղալընալ):

—Ինկիլիզլէրա գրալիշտաւընը իու-
րանտայա վաւըր օլուպ պէօյիւք
ալըղըլալ իլէ գապուլ օլընմը
տըր:

—Ինկիլիզլէրա գրալիշտաւընըն
պէօյիւք մալտուսը վէլի ահա Բը-
ռէնա տը կալ Գօրէնհալա (Տանի-
մալա փայթթիլ) կիթմէք ի-
շին Պիւրէսէլտէն կէշիւր իքէն չը-
մէնտըֆէր սթապիւնընա վալօն-
տա օլտըղընը հալտէ Լիւրիս Իս-
մինտէ 16 հալընալալ պիրիսի վա-
կօնընըն բէնէրէսինտէն Բախէ
տը կալըն իւզքիւրնէ իքի տէֆա
բէվօլէր պօշալմըշ իսէտէ գուր-
շուն իսապէթ իթմէմիշ տիր: Ըս-
թապիս միւլթէթլի չէման հէ-
թիւալ Լիւրիսըն գօլընտան թու-
թագ իւշինճի տէֆա սիւալը
սըգմայա միւսատէ պրագմամըշ
տըր: Չապըթ մէրգուս Լէրիտ-
ըն հէման տէրտէսթ իտէր: պու
իս իսթինթագընտա քէնտիսինին
տնալիլալ օլտըղընը պէյան իթ-
միշ տիր:

Բախէ տը կալ գուրթուլմա-
ւընտան տօլալը ումուս էվրա
հիւթիւմալալը թարաֆընտան
թէպիւրի հալի թէլէկրաֆալալ գա-
պուլ իթմիշ տիր:

Իշպու սուի գաւտ հաղընալ
Բալթիթ կաղէթալընը պէյա-

նընա նազարէն Բախէ տը կալ
քէնտիսինին էօլալալ իլէ իլէթիլէ
պուլընըն իւզքիւրնէ պուլալ վէ
լիւրիտալալ ալըր: ճէպա վէրիլէ
միսինի արգուս իթմիշ տիր:

—Հինտիսթանտա գըթլըղտան
մաւալալ պիր տէ հալմուրալալ
թալըր քիւլիլէթլի թէլէֆիւսալ
թա սէպէպ օլմագտա տըր: կալ
կալմալալ հալընըղ պիր կիւնտէ
217 քիշի մէզքիւր հալթալըղտան
էվմիշ տիր:

ՏԱԽԻԼԻՅԷ

—)(—

—Պուլալ հարալիլ նազըրըն
Ս. Բէթէրապուրկէ կիթմէսի Ռու-
սիա իլէ Պուլկարիա պէյինտէ
բէլի պիր մուգալէլէնտէ թէշքիլ
իթմէք իշին օլտըղընը Սօֆիա
տան էվրա կալէթլալ տըր: վէ
րիլէն մալի մալիւրտան անալը
մըշ տըր:

—Սապըգ Սթանպուլ Պուլկար
թիւթիլալ մալալալ կիւպար Ս-
Տիւթիլալ Բարիլալ սէրկիի ումու-
սինտէ Պուլկար գօմիսէրիլիլէ
թալին օլընմը տըր:

—Ֆէյա Բախէ Ֆէրանտան
հալթէթլէրի վիէնտան Սան Ռէ-
մայա կիթմիշ տիր:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Յաւալիկայ շարաթ օր հրապա-
րակ կ'ելլայ Շաշիլի Բ. թիւը հէ-
տեւալ իւզքիւրնէ իւմալ:

Արտասահմանի հայ մամուլը
Երուանդ Սրմաթէլիւն-Որը
(մենախօսութիւն) շար. եւ վերլ-
գամեր-Արշալիւր. Օրուան տպա-
ւորութիւններ, կրօն Միքայէլեան
— Օրմանեան, Ե. Ս. — Կանխա-
ծիւները (գիտական արձագանք),
Տօրթ. Յ. Ս. փափաղեան.—վեր-
ջին գիշերը (հնչեակ), Ջիւիւս-
Արեան ուժը, Եր. Սրմաթէլիւն
լեւոն.— Սուլթանին ներքին զինեղը
— Կիսամսեակ:

Շարաթ տպրիլի մէկին, իր-
կոյնան ժամը հնգին, Պուլկար
Բարիլալանտա ժողովարանը տան-
կիւրէ գաւալալալ իւմալ պիւթ ը-
լալ, թէ Հին հալը կտակարանն
ու Զուրանը իւշպէս են գոյացիր:
Ա. Ամիրխանեան

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՆԻՆԵՐ»

Գրքեր, տետրակներ, հրաւիրագրեր
տոմարներ եւ այլն կը տպագրուին
մենագիւրամատչելի գնով ու գրա-
ցուիչ պայմաններով: Յրաններէն
յուշարէն եւ պուլկարիլէն փօքիլ
գործեր եւ կը պատրաստուին:
Օտար երկիրներէ եւ ուրիշ քաղա-
քներէ եկած յանձնարարութիւնք փո-
թով եւ ճշդիւ կը գործադրուին:

Отговорникъ Н. Драгулевъ